

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տպածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ.Ի.Հ.  
Ա.ԺՈՂԿՈՄԱՏ

№ 9 ԽԵՆ-ԼՈՒ ԳՐԱԴՐԵՎՆ Եղ 9

Բժ. Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՅԵՐԿՈՒ ՎՈԶԸ  
ԶՐՈՒՑՑ

ՎԻՃԱԿՈՒԹՅՈՒՆ  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

19 · ՊԵՏՎՐԱԾ · 31

— ՅԵՐԵՎԱՆ —

891.99

Ch - 29


30 MAY 2011 4 32-K  
272

ՀՈՒՅՑ ԱՐԴՅՈՂՆԱՄԱՅԻՆ  
№ 9 ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 9

ԲԺ. Ա. ԱԼԵՔՍԱՆՐԱՆՉԻ

ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

# ՅԵՐԿԱՒ ՎՈԶԼԻ ԶՐՈՒՅՑ



ՀԱ-30306

ԱՌԴՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1931

1 - .02. 2013

12986

ԹԵՏՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ 1198  
ԳՐԱՆ. 6141  
ՏԻՐԱԺ 5000



60606-67

## ՅԵՐԿՈՒ ՎՈԶԼԻ ԶՐՈՒՅՑ

Գյուղի խրճիթներից մեկում, թախտի վրա, յերկու վոջիլ հանդիպում են միմյանց ու շատ ուրախանում:

Մեկի անունն եր Զորբա, իսկ մյուսինը՝ Սեվիկ: Յերկուսն ել պառավ հասակում ելին: Զորբան շատ ուտող-խմող եր ու գրա համար ել լավ առողջության տեր, իսկ Սեվիկը նրանից պակաս չեր: Հանդիպելով Զորբան ու Սեվիկն իրար՝ հարց ու փորձ են անում:

Զորբան տեսնելով, վոր Սեվիկի քեֆը տեղ չե, ասում ե.

— Սեվիկ ջան, Հը! բարի<sup>o</sup> լինի, քեֆդ հալո վո՞նց ա, երեվում չես:

Այս ու այն կողմը շարժվելով՝ Սեվիկը պատասխանում ե.

— Բարին արևել, Զորբա ջան, սաղ ըլես. Հլա վողջ ու առողջ եմ: Դե ապրում եմ ե՛լի:

— Իսկ դու վորտեղ ես, Զորբա ջան. ա՛յ մարդ, ասի՛ ենա, բան ա պատահել քեզ:

ԶՈՐԲԱ. — Վորտեղ պիտի ըլեմ, իմ սովորական տեղը, Կարապետ բիծու ջանի վրա

ընկած՝ ուստում-խմում եմ ու նրա փոխնորդի  
վրա ապրում։ Կնիկս\*) սրանից մի ութ տաս  
որ առաջ 14 յերեխա\*\*) բերեց, հիմա նրանք  
տասն որական են, արդեն կամաց-կամաց ժամ  
են դալիս։ Մի տաս կամ տասնյերկու որից հե-  
տո, սազ ըլեն նրանք, իրանք իրանց կաղահեն,  
համ ել ամեն մեկն իր համար ճուտեր\*\*\*) կու-  
նենա. իմանում ե՞ս, ճուտեր. դրանք իմ թու-  
ներն են լինելու։ Դե, գիտես ե՛լի մեր ջինսը։  
Ձե վոր մի վոջլից 2 ամսում մոտ 5 հազար վո-  
ջիլ ե ստացվում։ Սուտ չի ասած, թե մեզանից  
մեկն ու մեկը, իմանում ե՞ս, ընկնի մի մար-  
դու վրա, բարով տեսնես, եղ մարդը մի ամ-  
սից հետո վոջլով լցված կլինի։ Այժմ դու ա-  
սա, Սևլիկ ջան, հլա տեսնենք վո՞նց ես ապ-  
րում։ Յես քեզ վաղուց ա տեսել չեմ։

ՍԵՎԼԻԿ. — Դե գիտես ե՛լի, յես ել քեզ  
պես ու քու օրումդ եմ։ Մենակ դու, քե՛զ մա-  
տազ, ապրում ես կարապետ բիձու ջանի վրա,  
արել քեզ նեղութին չի տալիս։ Իսկ իմ ապրե-  
լատեղը Անդրիաս քեսու դալինու մազերումն  
ա։ Իմ տեղը, դուզն ասած, դեչ ա։ Թե Անդրի-  
աս քեսին փափախը վեր ա տռնում, արեն են ա  
ինձ խաչում ու վառում ա, իսկ թե մի փթա-  
նոց փափախը ծածկում ա, սիրտս մլորվում  
ա, քեֆս խարաբ ա ըլում։ Մի խոսքով, ապ-

\*) Վոջլի իգականը.

\*\*) Տասնչորս համ անիծ.

\*\*\*) Վոջլի թրթուր (վորդ)։

ըռում եմ, ե՛լի։ Ենա, քանի վոր մեր կյանքը  
շատ չի յերկար, ի՞նչ բան ա, վեց ոխտը շա-  
բաթվա կյանքը, պեսաք ե լազաթին փառավոր  
ապրենք։ Ուրիշները յերկար տարիներ են ապ-  
րում։ Այս, Անդրիաս քեռին 50 տարեկանից ա-  
վել ա, իսկ մենք, 45-50 որ ենք ապրում։ Դե  
եղ ել բան ա, ե՛լի։ Զորբա ջան, մի տաս տես-  
նեմ, կերակուրդ վո՞նց ա, վերջերս խոմ սո-  
ված չե՞ս մնում։

ԶՈՐԲԱ. — Ե՛հ, դու յել բան ես ասում,  
ե՛լի. իսկ պիտի սոված մնամ։ Դուն գիտես  
չե՞ս, վոր կարապետ բիձեն չարչարվում ա, աշ-  
խատում ա, յես նրա արինը ծծում եմ. արծից  
ել լավ բան կա՞ տշարհում։ Նստում եմ լա-  
զաթին նրա կաշջի վրա, կամ թե չե՞ հենց  
փոխնորդի վրա նստում, բերանս դնում նրա  
կաշվին ու լազաթին ծծում, ծծո՞ւմ կարա-  
պետ բիձու արինը. Ենքան եմ ծծո՞ւմ, վոր  
վորս կշտանա։ Դե գիտես ի՞նչ կա, արին ծծե-  
լիս կարապետ բիձեն վոր ասես ինձ չի նեղա-  
ցնում, ըսկի մատով բրդում ել չի. ա՞րա  
Սևլիկ, մի պատմի քո ապրուստի մասին, տես-  
նեմ դու վո՞նց ես ապրում։

ՍԵՎԼԻԿ. — Ե՛հ, վո՞նց պիտի ըլի։ Քանի  
կա Անդրիաս քեռին, յես ու իմ ողլուշազս  
կապրենք։ Սազ ըլի մեր տերն ու տիրականը.  
Նա չարչարվում ա ու տանջվում, իսկ մենք ձրի  
ապրում, ուստում-խմում ու վոչ մի բանի մա-  
սին ել չենք մտածում։ Շատ բան, թե մեզ ձրի-  
ակեր են կանչում։ Ասում են, վոր մենք հե-

Հենք աշխատում ու լավ ել ապրում ենք: Դուզ  
ա, Անդրիսս քեռին գժվար որեր ա քաշում՝  
ե՛լ հունձ, ե՛լ սար, ե՛լ գաշտ, վորն ասեմ...  
Հանդարտութիւն չունի: Բանն են ա, վոր ինձ ել  
իրա հետ քաշ ա տալիս, քրտնում ա ու ինձ ել  
թաց անում քրտինքով: Քրտինքի հոտն ել ինձ  
սպանել ա: Եդ հւա վոչինչ, Զո՞րբա ջան: Յես  
մի թազա բան եմ լսել: Վերջերս ինչ վոր մի  
նոր ու մեծ դուքան են բաց արել մեր զեղումը.  
յավաշ անունն ասեմ. Հա՛, կոսպերատիվ են  
ասում, ու եղ զահը բումարից Անդրիսս քեռին  
բյազ ու սապոն ա առել: Մի իրիզու Անդրի-  
սս քեռին իրա կնկա հետ գյափ եր անում, յև  
ել ասի ականջ անեմ, աննամ ի՞նչ են խոսում:  
Հլա լսի՛, Զո՞րբա ջան, թե ի՞նչ եյին խոսում:  
Կարապետ բիձեն տառում եր, վոր շաբաթը կամ  
թե յերկու շաբաթը մին իրա փոխնորդը փո-  
խել աի ու թազա լվացածը հագնի, թե՛ գեղու-  
մը բազնիս են բաց անում գեղացոնց համար,  
վոր շուտ-շուտ լողանան ու առողջ ըլեն: Բա՛,  
Զո՞րբա ջան, զուն ես բաները լսել չե՞ս: Յանի  
գիտես վոր, Զո՞րբա ջան, բաղնիսը, նոր բյա-  
զո, սապոնը մեզ համար գժուխը ա: Ենա մահ-  
ներս գալիս ա: Վո՞ր ջուրն ընկնենք, ի՞նչ ա-  
նենք, գիտում չեմ. վա՛յ մեր քաղցր ու հան-  
դարու կյանք. բա եղակս բան կըլի՞:

(Այստեղ Սեվլիկն սկսում է զայրանալ):

ՍԵՎԼԻԿ.—Արա՛, խի՞ ես սուս արել, ե՞:  
Զո՞րբա, սուս անելուց տներս կքանդենք, գի-  
տե՞ս: Ի՞նչ ուզում ա ըլի՛, մի իլլաջ պիտի

տեսնենք: Արի, Զո՞րբա ջան, վախչենք, զը-  
նանք մի ուրիշ տեղ: Մոտ որերս Անդրիսս քե-  
ռին ու Կարապետ բիձեն գնում են չըջանի սպոլ  
կոմը, զորեն են աանում, մենք ել զրանց հետ  
գնանք. ու գիշերը, յերբ նրանք քնած կլինեն,  
մենք եղ անպիտան Կարապետ բիձուց ու Ան-  
դրիսս քեռուց կանցնենք տան մարդկանց, չե՞  
վոր զոնազատանը չիմ ել մի թախտի վրա յեն  
քնում ու մեր անցկենալն ել մի գժվար բան չի-  
դու հո գիտես, մի չետվեր սհաթումը մենք  
կարանք մինից մինն անցնել: Ես լավ միտք տ-  
ելի մեր հին կյանքը կքաշենք. ետ զեղում վոչ  
բաղնիս կա, վոչ ել բյազ: Դե՛, Զո՞րբա, քե՞զ  
մատազ, գնա՞նք մեր ոլիսի ճարը քաշենք. գե-  
ժա՛ժ արի:

ԶՈՐԲԱ.—Տեղի նստի ու զուր ժաժ մի  
գալ. զվորն ուզում ես զնա, մեկ ա՛ մեզ հե-  
տեվելու յեն: Ամենազլիսավորը զուն մոռացար  
ասել. ո՞վ գիտե, զուցե լսել չես: Մեր գեղի  
համար Առժողկոմատն ինչ վոր մի բժիշկ ա-  
զրկել: Եդ բժիշկը գեղացոնց քարոզում աչ-  
վոր վոջիլը մեզ շատ վնաս ա, վոր վոջիլը մեր  
արինը ծծում ա, վոր մենք աշխատում ենք,  
իսկ նրանք ձրի ապրում, ու յետնա վոր վոջիլը  
մեզ վարակում ա: Եդ յաման բժիշկն ասում  
եր, թե վոջիլը տարածում ա սիանոյ տիֆ,  
հլա մի ուրիշ տիֆ ել. նա ասում եր, վոր  
սիանոյ տիֆը շատ զեշ հիվանդություն ա,  
վոր եղ ոլիֆից շատերն են մեռնում ու մեկ  
ել եղ բժիշկն ասում եր, վոր մեծ կըո-

վի տարբն գյուլլեն ենքան մարդ չի  
սպանել, ինչքան մարդ կոտորվել եռ ու սպան-  
վել սիպնոյ տիֆից, ու ևս բոլորին նա ավե-  
լացներ, վոր պատճառը չիմ վոջիլն ա, իմա-  
նում ե՞ս, վոջիլն ա, վոջիլը: Յես ու զու յենք  
պատճառը: Հասկանո՞ւմ ես, ՍԵՎՈՂԻԿ ջան:  
Այս, թաղա բան: Նա ասում եր, վոր յեթե  
վոջիլ չլինի, սիպնոյ տիֆ ել չի լինի: Նա ո-  
րինակ բերեց, վոր յերկրներ կան, ուր ժողո-  
վուրդը զարդացած եռ վոր ասես, վոչ մի վո-  
ջիլ ընդեղ չկա: Դրա համար ել ընդեղ սիպնոյ  
տիֆ չկա: Զահրումար ըլի եղ թափուր աշ-  
խարհը. ի՞նչ եմ անում, վոր զարդացած են,  
քանի վոր նրանք անաստված մարդիկ են: Ասո-  
վածը մեզ շունչ ա տվել, իսկ նրանք մեզ կտո-  
րում են: Վերջն ել բժիշկը մի բան ասառ, հա-  
մա ենթափուր բան եր նրա ասածը, վոր գեղա-  
ցոնց բերանը մնաց բաց: Բժիշկը ասեց, վոր  
ամեն մի գեղացի, միջին հաշվով 20-30 համ  
վոջիլ ա պահում ու կերակրում. ու եղ 20-30  
վոջիլը մի ամսում մոտ յերկու գրամ արին ա  
ծծում, իսկ մի տարումը քանի չորս գրամ.  
յեղնա հաշվում եր, վոր մեր գեղումը յերկու  
հազար յերկու հարյուր շունչ ա ապրում. ու-  
րեմն մի տարումը մեր գեղի վոջիլը հիսուն  
յերկու հազար գրամից ավել արին ա ծծում.  
ուրեմն՝ 52 կիլոյից ավել, յերեք բժիշկ ավել:  
Այս քեզ բան... ես վոր ասեց վոչ, ժողովուրդը  
մնաց սառած: Զիմն ել սուս եյին արել ու կա-

սես փետ եյին կտրել: Յես ել, ՍԵՎՈՂԻԿ ջան,  
շապկի ծալքումը կուչ եյի յեկել ու վախից  
ժաժ չելի գալիս, թուքս ել կարեցի վոչ կուլ  
տամ: «Դե հիմա, — շարունակեց բժիշկը — հաշ-  
վենք տեսնենք, թե ի՞նչքան վնաս ա տալիս մեզ  
վոջիլը. 52 կիլո արյունը յոթ ութ մարդու  
արյուն ե, ուրեմն՝ մի տարգա ընթացքում այս  
գյուղում յոթ ութ մարդ է սպանում վոջիլը:  
Իսկ յեթե հաշվենք մթերքների վրա 52 կիլո  
արյունը նշանակում ե՝ մի քանի կութ ալյուր,  
յուղ, շաքար, ու չափ բաներ»: «Ինչո՞ւ յեք ի  
զուր եղ վոջիլներին կերակրում, այդքան մը-  
թերք իզուր ջուրն ածում, չե՞ վոր այդքան  
փողով մենք կարող ենք մեր հասարակական  
կարիքների համար աշխատանքներ տանել:  
Զգիլի յեն վոջիլները»: Յեգնա բժիշկն ասեց,  
վոր վոջիլը պարագիտ ա, այսինքն՝ չի աշխա-  
տում, իսկ ուրիշի աշխատածն ուտում ու սիս-  
նոյ տիֆ ա տարածում. ջանի վրա քորելոց յու  
րեք ա առաջ բերում, հանգստություն չի տա-  
լիս, ու ես տեսակ չափ հիմար բաներ...  
«Պետք ե կովենք վոջիլների դեմ ամենաուժեղ  
կերպով»—ասում եր բժիշկը ու շարունակում  
— «նախ ձեր գյուղը պետք ե բաղնիս ունենա,  
այդ գժվար չե: Միասին հավաքվենք ու շե-  
նեք. յես ձեղ կոգնեմ: Հետո՝ կոոպերատիվի  
խանութից բյազ, միտկալ առեք ու ձեզ համար  
սպիտակեղեն պատրաստեք և շաբաթը մեկ  
անգամ կամ յերկու շաբաթը մեկ անգամ վո-  
խեք, միք թողնիլ ձեզ վրա յերկար ժամու-

նակ կեղտուոտ սպիտակեղենը։ Գլխի մազերն  
աշխատեք կտրել, իզուր միք պահիլ, վորով-  
հետեւ գլխի վոջիլն իր անիծու դնում է մազերի  
վրա»։

Այս խոսքերեց Սեվիկիր սրանեղում է,  
սկսում ե լալու առել—«Կո՞նց տիմ անիլ, ի՞նչ  
տի անիլ իմ ողլուշաղը, յեթե մազերը գյու-  
ղացիք կտրեն։ Զե՞ վոր իմ ու իմ ողլուշաղի  
ապրելու տեղը մենակ գլխի մազերումն ա»։

ԶՈՐԲՑՅ. —Ե՛Հ, Սե՛վլիկ ջան, մեր բախտն  
ես ա, ի՞նչ անենք։ Ահա թե՛ Սե՛վլիկ ջան  
ինչ բաներ եմ լսել յես։ Ժողովում եղ բժշկի  
անունը տվին, համա դուզն տաած՝ մոռացա։  
Կարծեմ՝ նրա անունը սանիտարական եր. մի  
խոսքով՝ անունը լավ չեմ հիշում։ Բժիշկը  
վերջացրեց իրա խոսքը նրանով, վոր սազ գե-  
ղը չիմն ել միասին վոջիլ դեմ կովիլ տեն ու եղ  
տեսակ ու շատ հիմար խրատներ։ Բանից  
դուրս ա գալիս, վոր եղ բժիշկն ու իրա ոգնա-  
կանները տնե-առուն պըտի ման գան ու սովո-  
րացնեն, թե վոնց ա հարկավոր վոջիլներին,  
իմանո՞ւմ ես, Սեվլիկ ջան, մեզ ե՛, մե՛զ, ջար-  
դեն ու կոտորեն։ Ա՛խ եղ բժիշկը, թե ճանդս  
կը՞նգնի՞, ենթավուր տուր կտամ, ենթավուր  
տեղ զրկեմ քեզ, վոր գնան ու գնաս, ել զարդ  
չլինի. եղ բժիշկը թե ճանդս կընկնի, համա  
լազաթին սիպնոյ տիֆով կլարակեմ ու կսպա-  
նեմ։ Վոնց վոր բեկում ա, եղ բժիշկներին հրա  
շատ ա հարկավոր կտորել։ Հը՞ Սեվլիկ ջան,

եղ վո՞նց ա քո բանը, վոտքերդ դոզոցն ա ըն-  
կել»։

Հենց այս խոսակցության ժամանակ հան-  
կարծ խրճիթ ե մտնում գյուղի բժիշկն ու ա-  
սում՝ «Ես թախտի վրայի շորում նույնպես  
կարող են լինել վոջիլներ, հարկավոր ե...»։

Ընկեր գյուղացիք, այս փոքրիկ սանիտա-  
րական պատմվածքը պահանջում է ձեզանից  
ուշադրություն։ Յեթե ուզում եք լինել ա-  
սող, ձեր գյուղխորհրդի միջոցով գործնական  
պայքար հայտաբարեք վոջլոտության դեմ։



БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ՀՀ Ազգային գրադարան



NL0395537

916.0 7 400.


17.986

к

21/2

137-

803



Д-р В. Александра

Беседа двух вшей

Госиздат ССР Армении  
Эреванъ

1931

891.99

2h-29